

Քեզ լաւատեսական սիրով
սիրեցի: Երեւ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, այնպէս ալ ես
ձեզ պիտի մխիթարեմ: Ես. ԿԶ. 13
Քու. Աստուածդ դիմաւոր
րելու պատրաստուէ, ո՛վ իս-
րայէլ. Ամով. Գ. 12

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ես եմ համբան ու հշմար-
տութիւնը եւ կեանքը. Յովթ.
ԺԳ. 6
Որդին Մարդոյ եկաւ որ-
պէս զի կորսուածը փնտռէ
ու. փրկէ. Գուկ. ԺԺ. 10
Ես եկայ որ կեանք ունե-
նան, եւ ալ աւելի ունենան:
Յովթ. Ժ. 10

“PANPÈRE” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան.—Յրանսա եւ Սուրիա 5 Յր. Պալքանեան երկիրներ 1 շիւ. ուրիշ երկիրներ 1,50 շիւ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

ԹԻԻ 4

Բ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1926

ՆԵՂՈՒԱԾ ՍՐՏԻՆ ԴԱՐՄԱՆԸ

«Սրտերնիդ չխռովի. Աստուծոյ հաւատացէք, ինծի
ալ հաւատացէք». Յովթ. ԺԻ. 1

Յիսուսի աշակերտները խռոված էին. զար-
մանք չէր, վասնզի իրենց Վարդապետը իրենցմէ
պիտի բաժնուէր. Յիսուս իր մահը մատնանշե-
լով ըսած էր. «Ինք պէտք է թողու գիրենք:»
Աշակերտները նեղուած էին եւ անոնց սրտերը
մխիթարութեան եւ քաջալերութեան կը կարօ-
տէին, անոր համար Յիսուս իր աշակերտաց
խռոված միտքը դէպի ճշմարիտ մխիթարութեան
աղբիւրին կը դարձնէ: «Յնծացէք՝ եւ ուրախ
եղէք:» Մատթ. Ե. 12. «Սրտերնիդ չխռովի:»
Ներկայ մարդկութիւնը մխիթարութեան պէտք
ունի, վասնզի մեծամասնութիւնը առանց Քրիս-
տոսի են եւ անոնք որ առանց Անոր կ'ապրին
միշտ խռոված են եւ խաղաղութիւն չունին:

Ա. Դարմանը—Քրիստոսոսի հաւատա-
ւըն է: «Ինծի հաւատացէք»:

Յուսահատական պարագաներ ունեցա՞ծ էք,
եթէ ունեցած էք այս դարմանէն օգտուա՞ծ էք,
եթէ այո՝ Քրիստոսի մխիթարութեան զօրու-
թիւնը լաւ կ'ըմբռնէք: Իբր հաւատացեալ Քրիս-
տոսի զաւակներ աշխարհի մէջ նեղութիւն պիտի
ունենաք, բայց Յիսուս կ'ըսէ. «Սրտերնիդ չխռո-
վի, ինծի հաւատացէք»: «Ձեր հոգը իմ վրաս
ձգեցէք, ես ձեզ պիտի խնամեմ»: Քու հոգերովդ
Անոր յանձնուա՞ծ հաւատքով:

Մենք ի սրտէ կը բաղձանք մեր վշտերէն
ու հոգերէն ազատիլ, սակայն նոյն ատեն կը
զրկենք զանոնք ամուր եւ ցաւալին այն է որ
զանոնք Աստուծոյ չենք վստահիր ուստի չենք
ալ յանձներ:

Մարդ մը ծանր բեռ մը կոնակն առած կո-
րաքամակ հեւ ի հեւ կը քալէր. անցնող կառա-
պան մը անոր խղճալի վիճակը տեսնելով՝ զայն
իր կողքին մէջն առաւ: Ճամբորդը ուրախու-
թեամբ կառք մտաւ, բայց առանց բեռը վար
դնելու, բեռովը միասին նստաւ: Կառապանը

տեսնելով ճամբորդին այս յիմարական արարքը
ըսաւ. «Մարդ, բեռդ կոնակէդ վար ինչո՞ւ չես
առներ, ի՞նչ օգուտ քու կառք մտնելդ: «Ձիս
կառքիդ մէջ առնելդ արդէն մեծ շնորհք մ'էր,
չէի խորհիր թէ կառքիդ մէջ բեռանս ալ տեղ
կար»: Այսպէս մեր հոգն ու մտմտութեան շաղկա-
ծ Յիսուսի կ'երթանք, բայց չենք հաւատար թէ
Ան մեզմէ կ'առնէ ամէն ինչ որ մեզ կը նեղէ,
զմեզ հանգստացնելու եւ մխիթարելու համար:
Եկէ՛ք Տէրովը տանինք զմեզ տանջող ու նեղող
ամէն վիշտ, հաւատքով եւ վստահութեամբ:
Քրիստոսի հաւատալ՝ Անոր յանձնուիլ եւ վստա-
հիլ կը նշանակէ: Ան մեզ միշտ կը կանչէ. «Եկէք
ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ». Մատ-
թ. ԺԱ. 28

Բ. Դարմանը—Երկնային յոյսն է:
Պօղոս Առաքեալ իր չարչարանքներուն մէջն էր
որ ըսաւ. «Եթէ մենք միայն այս կեանքին յու-
սացած ենք... խղճալի ենք...»: Ա. Կորնթ. ԺԵ.
ԺԵ. 19. Քրիստոս մեզի խոստացած է երանու-
թեան բնակարան մը, Քրիստոս հոն գացած է
մեզի տեղ պատրաստելու, ինծի եւ քեզի համար
ո՛վ յոգնած հոգի: Անոր վրայ լաւ խորհէ՛, Առաք-
եալը ըսած է, «Մեր քաղաքականութիւնը եր-
կինքն է...: Փիլ. Գ. 20. Մէկ մը Սկովտիացիի
մը հարցուց, «Դուն երկնից ճամբան գտա՞ծ ես»,
Սկովտիացին ըսաւ, «Ես արդէն հոն կ'ապրիմ,
իմ տունս երկինքն է, հոս լսի պանդուխտ մ'եմ:»
Հաւատացեալներուն ամենէն քաղցր եւ ամենա-
քաջալերական խորհուրդներէն մին է երկինքի
յոյսը: Յաւիտեանս Յիսուսի հետ ապրելու յոյսը՝
մեզ կը ներշնչէ մեր ջանքերը կրկնապատկելու,
ան՝ մեր մէջը Քրիստոսի նմանելու փափաքը
վառ կը պահէ, կեանքի ցաւերը համբերութեամբ
կրելու մէջ մեզի կ'օգնէ, ան մեզ կը սորվեցնէ
մոռնալ մեր «ես»ը եւ ծառայել այլոց:

Գ. Դարմանը եւ միակ դարմանը—Սբ.
Հոգւոյն մխիթարութիւնը: Յիսուս իր
աշակերտներէն բաժնուելու պահուն ըսաւ անոնց,
«Այէկ է որ ես երթամ, քանզի եթէ ես չերթամ

...» Յովհ. ԺԶ. 7. եւ կ'ըսէ նաեւ, «Նորէն կուգամ եւ ձեզ քովս կ'առնեմ...» ԺԴ. 3. Բայց այդ գալու ժամանակամիջոցը ո՞րչափ պիտի ըլլայ, չենք գիտեր: Յիսուս խոստացած է իրեննեքը մինակ չլթողուլ: Անոնց ուրիշ մխիթարիչ մը պիտի զրկէ, որ յաւիտեան անոնց հետ բնակի: Աշակերտաց ասկից աւելի մեծ խոստում մը չէր կրնար տրուիլ: Աշխարհ Սբ. Հոգին չկրնար ընդունիլ: Ինք Սբ. Հոգին մեղաւորաց չխոստացաւ այլ հաւատացելոց, որոնք Տէր Յիսուսի արեամբը փրկուած են: Մեղաւորին պատգամն է «Ապաշխարել եւ Աստուծոյ հաւատալ»: Յիսուս Բրիտանոսով արգարացած սրտին մէջ կը ներգործէ նոր կեանք մը: Սբ. Հոգին սիրտը կը մաքրէ եւ հոն կը բնակի իբր մխիթարիչ:

Ի՞նչ է մեր հաւատքը, ի՞նչ է մեր յոյսին խաբիսը: Ի՞նչ է մեր մխիթարութեան աղբիւրը:

Իմ յոյս Տէր Յիսուս Բրիտանոսն է, մխիթարութեանս աղբիւրը Սբ. Հոգին եւ հաւատքիս խաբիսը Յարուցեալ Տէրը:

Մ. Ա. Թ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ՄԱՐՍԷՅԼ

ԻՐԵՆՅ ՍՐՏԵՐՈՒՆ ՄԷՋ ԶԴՋԱՅԻՆ

Գործ. Բ. 57

Վէսթֆալիոյ քարոզիչներէն մին հետեւեալը կը պատմէ իր պատանեկան յիշատակներէն:

«Մեր Վէսթֆալիոյ գաւառին համայնքներէն ծեր քարոզիչ մը օրհնարեք գործունէութիւն մը ունեցած էր երկար տարիներէ ի վեր: Ամէն կիրակի Աստուծոյ խօսքը մեծ ազդուութեամբ կը հոսէր անոր շրթներէն:

Սոյն գիւղէն մի քանի ժամ հեռու տեղի մը մէջ կ'ապրէր երաժիշտ մը, որ ամենուն ծանօթ էր «Խենթ Յակոբ»ը անունով: Հոն ուր թեթեւ երգեր, հրճուանք ու խաղեր, պարեր ու խրախճանքներ կ'ըլլային, Խենթ Յակոբ անպակաս էր իր ջութակովը: Նա ո'չ Աստուծոյ կը վախնար ո'չ ալ մարդէ կ'ամչնար. իսկ լպիրշ խօսքեր, ծաղրածու բառեր իր բերանին մէջ սովորական էին:

Օր մըն ալ՝ այսինքն Պէնտէկոստէէ մը մէկ օր առաջ գիւղացիներէն մին այս երաժիշտին տունը այցելած պահուն պատմեց ծեր «Հայր Ռայխէ» ի մասին. այսպէս կը կոչուէր վերոյիշեալ քարոզիչը բոլոր գիւղացիներէն:

«Այդ մարդը զարմանալի մարդ մը ըլլալու է ինչպէս կը լսեմ», ըսաւ Յակոբ, «զիս այնքան կը հետաքրքրեա որ, կ'երեւի թէ ինծի ալ անգամ մը լսել պիտի տաս զինքը...»

«Տիկին, վաղը կէսօրուան ինծի համար կերակուր մի եփեր, վասնզի առտուն կանուխ անկողնէս ելլելուս պէս պիտի երթամ եւ «երկինքէն որոտացողին» ձայնը լսելու հաճոյքը պիտի վայելեմ, իսկ Երկուշաբթի հոգեգալուստի պարահանդէսին զարձեալ իմ գործիս գլուխն եմ:» Յակոբի կինը, որ հաճոյասիրութեան մէջ իր էրիկէն պակաս չէր մ'նար, սարսափահար դէմքով մը անոր նայեցաւ ու յարեց. «Կը խնդրեմ, մի՛ երթար, ես լսած եմ որ այդ ծերուկը շատ մը մարդոց ուղեղը դարձուցեր է:»

— Եւ դու կը վախնաս թէ, ինծի՞ ալ այդպիսի բան մը կը պատահի, ու օր մը պիտի գայ որ ես այս իմ վաստակաբեր արհեստս ձրգեմ. չէ՛, կ'նի՛կ, չէ՛, քու ամուսինդ «Խենթ Յակոբ» այդքան ալ կակուղ փայտէ շինուած չէ. ընդհակառակն կ'երթամ հոն, որպէսզի ցուցնեմ թէ այդպիսի ահագնազորող(Ն) քահանաներու ընդդէմ մարդիկ կան որ դեռ իրենց անկախութիւնը կը պահեն եւ այդքան ալ շուտով իրենց եղջիւրներէն չեն բռնուիր:»

Կինը որքան որ ջանաց զինքը ետ կեցընել իր դիտաւորութենէն, այնքան աւելի կը հաստատուէր Յակոբ իր հետեւեալ օրուան ծրարագրին մէջ:

— Էհ, ապահովութեան համար, ջութակս ալ հետս մէկտեղ եկեղեցի կը տանիմ, բացառանչեց Յակոբ, ու երբ Երկուշաբթի առտուն կանուխ զուարճալի եղանակներ նուագելով գիւղը մտնելու տեսնես, այդ տեսարանին առջեւ պիտի գիտնաս թէ՛ քու բոլոր վախդ ու հոգեբոյ իմ մասին, ի զուր եղած են:

Եւ իրաւամբ միւս առտու եկեղեցի գացողները մեծ զարմացումով տեսան որ Խենթ Յակոբ ալ ջութակը անութիւն տակը նոյն ճամբան ձեռք առած էր: Ճամբան կարգ մը կատակալի ծաղրածու բառեր թռչեցան իր շրթունքներէն, բայց շատ չանցած թեթեւամիտը նըշմարեց թէ, Պէնտէկոստէի Ս. օրուան հանդէսին գացող այս մարդոց մէջ տեղի հոգի մը կը տիրէր, ինչ որ նման չէր ժողովրդային պարահանդէսներու մէջ գտնուողներու հոգիին: Շատեր կ'զգուշանային ճամբան իրեն հետ քայլել, ուրիշներ ալ իր բերնէն ելած թոյլ խօսքերուն ընդդէմ՝ զսպուած ժպիտով մը դժգոհ կ'անցնէին: Մի քիչ գրգռուած տրամադրութիւնով Յակոբ եկեղեցի մտաւ. այդ զգացումները աւելի ալեկոծուեցան, երբ դիտեց որ շուրջիննե-

.....
Շարունակութիւնը կարդալ 29րդ էջին վրայ

Անոնց զարդարանքը ջրլլալ դրսէն մազե

քու. հիւսուածքներով եւ ոսկիներու շար-
քերով կամ շքեղ հանդերձներ հագնե-
լով, հապա սրտին ծածուկ մարդը անեղ-
ծութիւնով հեղ ու հանդարտ հոգիին զար-
դը թող ըլլայ, որ Աստուծոյ առջեւ խիստ
պատուական է : Ա. Պետ. Գ. 3.4 :

Անց ուր ժամանակդ այնպէս, որ Փրկչիդ
յանդիմանական ազդարարութեան պէտքը չու-
նենաս :

Օրինակ եղիր հաւատացեալներուն՝ խօս-
քով, վարմունքով, սիրով, հաւատքով եւ
մաքրութեամբ : Ա. Տիմ. Գ. 14, Ա. Թեա. Բ. 4 :

Հունա՛ Յիսուսի հասոյ ըլլալ, քու ամբողջ
արտաքին եւ ներքին էութեամբդ, նոյն իսկ
զաղանի խորհուրդներովդ, եթէ անով նոյն իսկ
մարդոց առջեւ վատկածդ հասութիւնը կը
սրնցնես :

Ամէն ի՛նչ որ կ'ուզէք որ՝ մարդիկ ձեզի
ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք :
Մատթ. Ե. 12 :

Խորհէ՛ միշտ թէ Յիսուս ի՛նչ պիտի ընէր
եթէ քու տեղը ըլլար :

Ամէն մէկը նոյն միտքը թող ունենայ, որ
Քրիստոս Յիսուսի մէջ էր : Փիլ. Բ. 4 :

Քու քրիստոնէական կեանքդ անհատ քրիս-
տոնեաներու վարքէն կայնում թող չունենայ
(Բ. Կորնթ. Ժ. 12) եւ մի՛ խորհիր թէ այս կամ
այն բանը քեզի թոյլատրուած է, որովհետեւ
ուրիշներն ալ կ'ընեն զայն :

Յիսուս ըստ, Դուն իմ ետեւէս եկուր :
Յովհ. ԻԱ. 23 :

Վարուէ՛ ամէն տեղ իբր Տէրոջդ Յիսուս
Քրիստոսի Տշմարիտ աշակերտը, պատրաստ
ամէն նախատինքի նշանակ լինիլ, որ չըլլայ
թէ Յիսուսի անունը քու միջոցադ անպատ-
ուրուի :

Մովսէս առեւ իմե՛ հարստութիւն սեպեց
Քրիստոսի նախատինքը՝ քան թէ եգիպ-
տոսի գանձերը երբ. ԺԱ. 26 :

Մի՛ վստահիր քու զգացումներուդ, եթէ
քու խորհուրդներդ, գաղափարներդ կամ զգա-
ցումներդ Աստուծոյ խօսքին չեն համաձայնիր :
Մի՛ վստահիր քու զգացումներուդ այլ վստահէ
միայն եւ մի միայն անոր, որ Աստուած իր խօս-
քին մէջ քեզի՛ իր բարեկամին յայտնած է, եւ
ցուցուր այնպիսի հաստատական վարմունք մը
այս խօսքին համաձայն, լիան հնազանդութեամբ
եւ առանց հակահառութեան :

Ամբողջ Ա. Գիրքը քու ուղղիչդ
ըլլայ ամէն բանի մէջ :

Սուրբ գրքերը գիտես, որոնք կրնան ի-
մաստուն ընել զքեզ փրկուելու՝ Քրիստոս
Յիսուսի վրայ եղած հաւատքովը : Բ. Տիմ.
Գ. 15 :

Քեզի Յիսուս, կ'ուզեմ հետեւիլ ամէն
վայրկեան ուր եւ ինչպէս որ կ'ուզես :

Իմ ողբարներս իմ ծայնս կը լսեն... եւ
իմ ետեւէս կուգան : Յովհ. Ժ. 27 : Ի՛նչ որ

Մի՛ խաբուիք. չար ընկերակցութիւնները բարի վարքը կ'ապականեն. Ա. Կորնթ. ԺԵ. 33

Տշմարտութիւնով է, ի՛նչ որ պարկեշ-
տութիւնով, ի՛նչ որ մաքրութիւնով, ի՛նչ
որ սիրով, ի՛նչ որ բարի համբաւով...
այն բաները խորհեցէք : Փիլ. Գ. 8 :

Ամէն տեսակ գէշ բաներէն ետ
կեցէք : Ա. Թեա. Ե. 22.

Սուրբ եղէք ձեր բոլոր վար-
մունքներուն մէջ : Ա. Պետ. Ա. 15.

Ո՛վ որ բարին ընելը գիտնայ
ու չընէ, այն մեղք է անոր :
Յակ. Գ. 15.

Յիշէ՛ թէ Յիսուս կ'ստանձնէ այս կերպով
իրեն յանձնուած վարքը յարածամ պահպանել :
Ուստի հրաժարէ սրտանց իւրաքանչիւր ծանօթ
մեղքէ եւ նոյնիսկ ամէն տարակուսելի բանե-
րէն, որոնց մասին պիտի խորհէիր թէ թերեւս
հաւատքէն չեն բխիր : Այս պատճառաւ քու
բոլոր ջանքդ ըլլալու է, որ ո՛չ մէկ ամպ, այո՛
ո՛չ մէկ շուք դեռ մնայ քու եւ քու Փրկչիդ
մէջտեղ : Եթէ այս սուրբ մտերիմ բարեկամու-
թիւնը ամենազգուիկ մեղքի մը պատճառաւ
մէկ ակնծարթի մը համար ընդհատուի, ան-
միջական խոստովանութիւնով եւ սրտի զղջու-
մով ու մեղքը մէկ կողմ ձգելով, վերահաստա-
տէ նոյն բարեկամութիւնը Յիսուսի հետ, վստահի
դու այս մտերիմ բարեկամութեան կանչուած
ես : Ա. Կորնթ. Ա. 9

Ի՛նչ բան որ հաւատքով չէ՛ մեղք է :
Հռովմ. ԺԳ. 23 Ուրեմն արժուն կեցէք,
վստահի չէք գիտեր թէ ո՛ր ժամուն ձեր
Տէրը կուգայ : Մատթ. ԻԳ. 42

Քեզի կուտամ իմ սիրտ ու սէր
Ա՛խ, տիրէ իմ մէջ անարգել
Իմ աջքերս անոնց ամէն ձամբա-
ն երուն վրայ են : Երեմ. ԺԶ. 17

Ի՛նչ պիտի ընէիր, եթէ գիտնայիր թէ այս
ժամը քու կեանքիդ վերջին ժամն է :

ՅԱՃԱԽ ԻՆՔՁԻՆՔԻՒ ՀԱՐՅՈՒՐ

Կը կարդամ, կը սիրեմ Ա. Գիրքը առեւ,
քան բոլոր միւս գրքերը : Սաղմ. Ա. 2

Կը ջանամ այս աշխարհի կերպարանքու-
վը չկերպարանիլ : Հռովմ. ԺԲ. 2

Կը սերմանեմ մարմնի՛ն թէ հոգիին :
Գաղ. Զ. 7-8 Քրիստոսի նախատինքը
ինծի առեւ սիրելի՛ է քան աշխարհի
զրուատիքը : Երբ. ԺԱ. 24-26 Առեւի
պիտի ընտրէի՞ մեռնիլ քան մեղանչել :

Մատթ. Ե. 29 Աղօծքի կեանքը կ'ապրի՞մ
Եփես. Զ. 18 Աստուծոյ հանդէպ ունի՞մ
այն սէրը որ դէպի հնազանդութիւն կը
ստիպէ : Բ. Կորնթ. Ե. 14-15 Յարատեւ
Աստուծոյ համար զբաղուած եմ : Յովհ.
Թ. 4 Փրկիչս բոլոր սրտովս կը սիրեմ :

Մատթ. ԻԲ. 37

Ձիս կը սիրեմ : Յովհ. ԻԱ. 16

Իմ սրտիս մէջ պահեցիր քու խօս-
քերդ, որպէսզի չմեղանչեմ քեզի
դէմ, Սաղմ. ԶԺԺ. 11

Կատարեալ եղէք, ինչպէս ձեր
երկնաւոր հայրն ալ կատարեալ
է : Մատթ. Ե. 48

Ուստի ամուր կեցէք այն ազատութիւնով, որով Քրիս-
տոս մեզ ազատեց, միայն թէ ձեր ազատութիւնը
մարմնի ցանկութիւններու արտաքին չըլլայ, Գաղ. Ե. 17-18

Այն ձեզի իշխանութիւն կրտսամ թշնամիին բոլոր զօրութեանը վրայ. զուգ. Ժ. 19

Գործ. ԻԳ. 16

ըր անհաճոյ ակնարկով մը զինքը կը դիտէին, իբր թէ ըսել ուզէին. «Ի՞նչ բան ունիս հոս» Յակոբ, որ այդ «կեղծ աւոյն երուս» առջեւ իսկապէս հպարտ պէտք էր զգար ինքզինքը, չհամարձակեցաւ բնաւ քայլ մըն ալ առաջ երթալով միւսներուն հետ նստիլ: Եկեղեցւոյ դռունէն ոչ այնքան հեռու սիւնի մը շուքին տակ կայնեցաւ: Իր ներքին հակակրօնիւնը աւելի գորացնելու դիտումով դէմքին խրոխտ արտայայտութիւն մըն ալ տուաւ:

Արդ, քարոզի ժամանակ եղած էր եւ հաւ «Հայր Ռայիս» բեմը կ'ելլէր: Յակոբ երկար տարիներէ իվեր ո'չ մէկ անգամ եկեղեցի մտած էր, եւ ամէն անգամ որ իր առջեւ եկեղեցի յաճախելու մասին կը խօսուէր, ըսած էր. այդ քահանաներուն ըսածները արդէն դպրոցին մէջ գոց սորված եւ շատոնց իվեր ալ մոռցած էր...: Սակայն այսօր, այսօր քարոզիչին բերնէն ելած իւրաքանչիւր բառ իրեն նոր կ'երեւէր: Յակոբ բնաւ նկատած չէր որ իր դէմքի խրոխտ արտայայտութիւնը հետզհետէ մեղմացած էր եւ ան ականջ կտրած մտիկ կ'ընէր, քարոզէն բառ մը իսկ չկորսնցնելու մղձաւանջէն ճնշուած: Աստուծոյ խօսքը այնպէս մեղմօրէն կը հնչէր իր ականջներուն որպէս թէ իր կեանքին մէջ առաջին անգամը լսած ըլլար... Իսկ միւս կողմէն, եղան վայրկեաններ որոնց մէջ նա անգուսպ ձայնով մը պիտի գոչէր, Լոէ, ծերուկ, այդ ըսածներդ ճշմարիտ չեն կրնար ըլլալ: Միեւնոյն ատեն ներքին ձայն մը կը գոչէր. եւ սակայն այս ամէնն ալ ճշմարիտ են: Իր սիրտը կը բաբախէր ուժով ուժով, արցունքներ սկսան հոսիլ իր արտեւանդութիւնէն... Թերեւս ումանց անհաւատալի երեւի եւ սակայն իրականութիւն է, որ Յակոբ «Ամէն» էն վերջը եկեղեցիէն անմիջապէս դուրս նետուելով իր ջութակը ջարդ ու փշուր ըրաւ Աստուծոյ տանը պատերէն միոյն վրայ: Այն օրէն իվեր նա ո'չ մէկ անգամ պարահանդէս մտաւ, հապա նոր արհեստ մը ընդգրկելով երջանիկ ու գոհ կեանք մը ապրեցաւ: Հոգեգալուստի քարոզը ջութակը կտրած եւ սակայն ջութակահարը ազատած էր:

«Պապը Գոթ» էն

ՊՈՒ ԿԻՒՆ ՎԷ ԵԱՐԸՆ ԱՐԱՍԸՆՏԱ

Պիր պէօյիւք օգիանոս վափօրու սալօնուտա հէր քէս քէյֆ ու զէվզ իշինտէ, չալըլար չալընմագտա վէ հէր քէս կիւլիւպ սէօյլէմէքտէ իտի: Լաքին գափտան հօգարտա քէնտի մէմուր-

լարըլա տէհէթլի թէլաշ իշինտէ իտի: Տէրէճէ ի հէրաթթ պիրտէն տիւշմիւշ իտի վէ պու եանըլմագ սուրէթտէ կէօսթէրիօր իտի քի վափտր՝ երեզմէքտէ օլան պիր պուլ տաղընա եազլաշմըշ իտի: Օնա չարփըլմագ էօլմէք վէ մահվ օլմագ տէմէք իտի: Էօյլէ պիր փուս վար իտի քի սայքի պիր ատըմ էօթէյի կէօրմէք միւմքինսիք իտի: Թէհլիքէ անկլաշըլմըշ իսէտէ կէօրիւմէյօր իտի, հէր հանկը պիր տաղիգատէ չարփըլմագ միւմքին վէ օ գէման գուրթուլուշ եօգ իտի: Ծիւմլէ թայֆէլէր կէօյէրթտէ, պազըլարը խէլաա գայըզլարընը հազըրլամագտա: Եօլնուլարը հէյէճանա կէթիրմէմէք իշին հէր ֆէրտ սիւքիւթլէ քէնտի վազիֆէսինէ գօշայօր վէ իւմիւտսիւկ կէօլէրլէ գարանլըղա տօղրու պազըլօրլար իտի: Աշաղըտա սալօնտա իսէ օրգէսթըրա չալմագտա վէ չիֆթլէր տանս էթմէքտէ իտի: Նէվպէթճի շիւտի չաղըրտը «պուլ տաղընա 300 մէթրօ գալմըշըլ» գափտան էմը էթտի «իսլիմին պիւթիւն գուվէթիւնի վափօրու կէրի տէօնտէրմէյէ սարֆ էյլէյին»: Մաքինա տուրտու, կէրի չէվիւրմէք իշին թէքրար իշլէտիլտի, լաքին կէրի կիտէճէք հէրէ իւրըլա իլէրի կիթտի: «200 մէթրօ».— «150 մէթրօ գալտը»: Աշաղըտա եօլնուլարըն խապէրի եօգ տըր քի պիր գաշ տաղիգէ սօնրա վափօր խարապ օլաճագ տըր: Միւզիկ թէքրար պաշլատը վէ եօլնուլար քէյֆլէրինտէն հայզըրըլօրլար: «100 մէթրօ գալտը»: Օճագըր գազանլար փաթլալաճագ տէրէճէտէ օճաղը եազմագտա, լաքին վափօր իթաաթ էտիպ տէօնմէյօր: Գափտան մէվգիինտէ տօնմուշ կիպի տուրուլօր, հալա վափօր իլէրի կիթմէքտէ, մէմուրլար կէօյէրթէին իւզէրինտէն գայըզլարա գօշմագտա վէ գայըզլար տօլմագտա: «20 մէթրօ գալտը»:— Գափտան «պիթտի, իւմիտ գալմատը» տէյու ֆէրյատ էտիյօր, մաքինալար սիւրաթլա իշլէյօրլար վէ հէր քէս պիլիյօր քի 2000 տէն գիյատէ ֆէրտլէրին հայաթը պիր թէլիւզէրինտէ տիլ: Գափտան օլ հէյպէթլու պուլ տաղընը կէօլէրի իլէ կէօրտիւ չիւն անճագ 10 մէթրօ գալտը: Սալօնտաքիլէր կիւլիւպ սէօյլէմէքտէ, գատէհլէրինի տօլտուրմագտա վէ եարընքի սապահըն քէյֆի իլէ մէսըրու օլմագտա իտիլէր...: Անսըզըն նէ ազիւ խարապիյէթլէ հէր շէյ էնճամա կէլտի:

Պիզիմ եօլնուլուղումուլ տախի պէօյլէ տիրատէմլէր տանս էտէրլէր, իշլէրլէր վէ կիւլէրլէր, չիւնքի պու կիւն վէ եարըն արասընտա պիր փէրտէ վար քի օ կէլէճէք տաղիգէյի էօրթէր. սօնրա նէ՞ օլաճագ: Սէնին էօմրիւյին եօլնուլուղու նէրէյէ տօղրու կիտիյօր, էօլիւմ քէնտի էլինի գափտուտ չալմագ իշին հիշ ուզաթտը մը: Պու կիւն վէ եարըն արասընտա տահա պիր փէրտէ վար, ամա ափանսըղ տիւշէր, եարըն պիրտէն կէլիւր վէ սօնրա... Էօնիւնճէ պու կէլիտտէն

կէջմիշ օլանլարտան սիվալ էթ սանա նէ տէյօր-
լար. «քեա՛շքի պէօյլէ օլաճաղընը պիլէ ի-
տիք...» :

Է՛յ ճան, սէնին իլէ-էօլիւմ արասընտա քիմ
պիլիւր աճէպա գաչ մէթրօ գալմըշ տըր, Գրիս-
տոսըն խէլաս գալըղընա հալա կիրմէմիշ իսէն,
պու կիւն անըն իշինէ կիրմէյէ աճէլէ էյլէ վէ
Ալլահըլըն հոգուրոնա չըգմաղա հազըր օլ :

ԱԵՐՃԵՄԷ

Ե. Պ.

ՐՈՒՀԱՆԻ ՄԷՇԳ (*)

Հոկ. 19 կիրակիտէ պիղէ վերիլէն Բապ-
պըն քէլամը, Բ. Միւլ. Թ. Էսասի քէլամ. Բ.
Միւլ. Գ. 1. իքի խանէ, վէ արասընտաքի մու-
հարէպէ : Ղալ. Ե. 17 աչըգ սէօյլէյօր քի, պու
թէն իլէ Բուհ արասընտաքի մուհարէպէ տիր.
պու տէյիլ անճագ տիւնեա իլէ միւմիւն արա-
սընտա (Թէք. Գ. 13) օլան ատապէթի կէօսթէ-
րիր, իլլա հէմ տախի միւմիւնտէ մէվճուտ
օլան 2 թապիւթը իմա էտէր քի օ պիր պիրի-
նէ մուխալիֆ տիր. իսմայէլ վէ իսահակ, Յա-
կոբ վէ Եսաւ րէմշ տիրլէր, լաքին էն էյի վէ
շիմտիքի հալ ու վազթըմըգա էն մուվագըր
էօրնէք Սաւուղ իլէ Դաւիթ տիր : Սաւուղ թէ-
պէտտիւլ էթմիշ պիր ատէմ իտի. Ալլահ ծնա
պաշգա պիր երէրէք վէրմիշ իտի, իւզէրինէ
Ալլահըն Բուհու կէլտի, փէյղամպէրլիք էթտի,
իլհամ սէօյլէտի, մէլիք օլմագ իշիւն արանը-
տըգտա էշեա արասընտա կիզլէնտի, թահգիր
օլունտուղոնտա սիւքիւթ էթտի : Շէօյլէ քի
Բապպ ծնու մէլիք օլմագ իշիւն մէսն էթմիշ
իտի, լաքին նէֆսին իրատէթի ալթըն-
տա իտի. Ա. Միւլ. Ժ. 9. իլք իթաաթսըղը-
ղը իտի. Ա. Միւլ. Ժ. 8 Բապպըն քէնտինէ
վէրտիյի քէլամը իտի, լաքին օ հըֆգ իճրա
էթմէտի. եափտըղը ամէլ ինսան նագարընտա
կիւնահ օլմատըգտան մատա, էն մուգատտէս
պիր խըգմէթ իտի. լաքին կէօրիւնմէյէն վէ
կիզլիտէ իշլէյէն գուվվէթ նէֆս իտի, քէլամ
փէք աչըգ իտի «Սանա նէ եափաճաղընը պէ-
յան էտինճէյէտէք... պէքլէ.» իմտի օ, քէն-
տինէ աիտ օլմայան, վէ եափմասը էմր օլուն-
մայան իշի, նէֆսին գուվվէթիլէ իճրա էթտի :
2 ճի իթաաթսըղըղը Ա. Միւլ. Ժ. 9 : Այէթ
1-3 Բապպըն վէրտիյի քէլամ վէ էմր, «Կիթ,

վուր, հէր նէսի վար իսէ, էսիրկէմէյիպ մէ-
լուն տէյուլ թէլէֆ էթ, էօլտիւր,» լաքին
քէնտիսի, հէր գըյմէթլի շէյի էսիրկէյիպ,
հէլաք էթմէք իսթէմէտի : Կէօրիւյօրըգ
պուրատա օլան կիւնահըն ճինսի նէ գատար
Փարզը, Ալլահըն քէլամընտա պէյան օլունան
իրատէթին է գարշը, նէֆսին իրատէ-
թի ճէնկէ գալըյօր : Պու հագիգաթըն պիլի-
սինէ մալիք օլտուգտան սօնկըա գաստէն
կիւնահ տըր : Անըն իշիւն 23 այէթտէ «Իս-
եան սիրպաղըգ կիւնահը կիպի, վէ ինատ
փուլփէրէսթլիք ֆէսատը կիպի տիր» տէյօր :
Պու իսեան վէ ինատըղը իշիւն չարէ եօգ, ան-
ճագ շիտտէթլի հիւքմ, (Իպը. 10. 26-27) «Մէ-
լիք օլմագտան րէտտ օլունտուն,» «Հիւքիւմէ-
թին սապիթ օլմայաճագ :» Ինայէթ անտէն
ալընտը : Իշլէ Սաւուղ խանէսի պու :

Կէլէլիմ Դաւիթ խանէսինէ. Ա. Միւլ. 13.
14 վէ Ամուլ. 13. 22 : Դաւիթ Ալլահըն գալ-
պինէ մուվագըր պիր ատէմ, Ալլահըն հէր միւ-
րատընը իճրա էտէճէք օլան պիրի իտի : Չօգ
էլէմլէրտէն կէշտի, պէօյլէք վէ տէրին տիւ-
շիւշէրի օլտու, լաքին ինայէթ ծնտան ալըն-
մատը, քէմալէ էրտի, թախթա չըգտը, հիւքիւ-
մէթի սապիթ օլտու. պու իպն Ուլլահ վէ Մէ-
սիհ օլան Բապպ Յիսուս Գրիստոսա պիր էօր-
նէք տիր, (անճագ քի 0 կիւնահ իշլէմէտի. գու-
սուրսուղ, լէքէսիգ իտի :) 0 պէշէր ճէսէտինի
ալտը, աչըլմըշ գուլագ իլէ, փէտէրին իրատէ-
թինի անկլատը քի 0 գուրպան վէ գէպիհէ վէ
թագտիմէլէր իսթէմէյօր, իլլա քէնտինի,
վէ ճէսէտինի խաշտա գուրպան վէրմէսինի
իսթէյօր, կէօնիւլլէ, իրատէթիլլէ ծնու թէսլիմ
էթտի : Պէօյլէճէ էլէմլէրէ իթաաթը էօյրէնտի.
պու սէպէպտէն փէտէր, Օնու իհեա էթտի,
Բապպ վէ Մէսիհ օլմագ իւզրէ թէրֆի էթտի,
սէմատա վէ գէմինտէ հէր հիւքիւմէթի Օնա
վէրտի. 0 սալթանաթ էթմէլի, հէր տիգ ծնա
չէօքմէլի, հէր լիսան Օնու Բապպ տէյուլ թագ-
րիր էթմէլի : (տիւշմէնլէր տիգ չէօքմէլի :)
Պու վագթըն փէք եագըն օլտուղոնա շիւպհէ-
սիգ իսպաթըմըգ վար, էն պէլլի իսպաթ պիղէ
կէլէն նուր վէ հագիգաթ տըր. իսաչըն նուրու
գալպիմիղէ փարլատը, օրատա ատէմլէրին
գալպինին, Ալլահա գարշը, թապիի օլան տիւշ-
մէնլիյի կէօրիւնտիւ, հէմ տախի Ալլահըն
ինայէթի կէօրիւնտիւ, քի 0 ինայէթ թապիի
վէ խըզի օլան պու տիւշմէնլիյի, իթաաթսըղ-
ըղը տէֆ էտիպ, Օնու սէվէն, իման իլէ իթա-
աթ էտէն պիր եէնի Ատէմ խալը էտիյօր, նա-

(*) Պու մէշգտէն իսթիֆատէ էտէ պիլսէք
իշիւն իշարէթ էտիւմիշ օլան այէթլէրէ Գ.
Մուգատտէստէ միւրէճաաթ էթմէք լազըմ
տըր :

արլ Մէֆիպօշէթ, Սաւուղ խանէտանընըն զաթ-
լէ միւսթահազգ, վէ էօլմիւշ քէօփէք մէրթէ-
պէսինտէ պիրի իքէն, Դաւիթ խանէսինին
օղուլլարը մէրթէպէսինէ կէշիպ սօֆրատա
պէրապէր օթուրմագ վէ թաամ էթմէք տէրէ-
ճէսինէտէք երեքսէլտի. Յիսուս Բրիստոսուն
գուրպանը վէ գանընտա պու գուվվէթ վէ ինա-
յէթ զահիր օլտու, քի Օնա իման էտէնլէրէ
էվլատ Ուլլահ օլմագ սէլահիյէթինի վէրտի
քի, պու նէ գան, նէ թէն, նէ տէ ինսան իրա-
տէթինտէն, անճագ, եօգարըտան, Ալլահ-
տան, ինայէթ տէն օլան եէնի տօղուշ իլէ,
վէ Մէֆիպօշէթ, Երուսաղէմտէ սաքին օլտու-
ղու կիպի, պու եէնի հայաթ Յիսուս գանըն-
տա էպէտէն էմին հրֆգ օլունույօր. Եռհ. 10.
28-29: Իմտի Բ. Միւլ. 9. 3 այէթին սուալը-
նա նէ՞ ճէվապ վէրէճէքսին:

Ն. Լ.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԵՒ ԶԱՆՈՆՔ ՊԶՏԻԿ ՏՂԱՅ ՄԸ ՊԻՏԻ ԱՌԱՋՆՈՐԴԷ (Եսայ. ԺԱ. 6)

Դանդաղօրէն, օրուան առաջին շողերը կը
թափանցեն դռներուն եւ պատուհաններուն ճեղ-
քերէն: Ամէն ինչ հանդարտ է պզտիկ սենեակին
մէջ. հայր, մայր, մանուկներ դեռ կը քնանան
փաթթուած իրենց «Փէի Ուս»ներուն մէջ (2ի-
նական վերմակ):

Ամէն ալ կը քնանա՞ն... ոչ, երկուսեւ աչքեր
կը փայլին կէս-խաւարին մէջ: Պզտիկ աղջկան
մը դուռը կը վերնայ, փնտռելով լոյսի շողիկ-
ները: Ան կ'ողջունէ նոր օրը եւ շատ կամաց,
առանց աղմուկի՝ իր տաքուկ վերմակէն դուրս
կը սողայ: Նիու Յու չվախար կատաղի հովէն՝
որ մոնչիւնով լուսկեաց տան շուրջը կը դառնայ,
եւ շատ դիւրաւ կը մտնէ նաեւ այս պզտիկ սեն-
եակը՝ անոր հին պատերուն լայն ճեղքուածքնե-
րէն: Աղջնակը կը ծնրադրէ անկողինին վրայ:
Իր շուրջը ոչ ոք կը կասկածի իր ըրածին. մը-
նաց որ, ո՞վ կրնար զայն հասկնալ: Ասիկա իր
զաղտնիքն է. բայց որքա՞ն թանկագին է ան
իրեն: Քանի մը ամիս կ'ընէ, Նիու Յու իր սիրտը
Յիսուսի տուած է: Փրկութեան Բանակի սպան
իրեն բացատրած է թէ Յիսուս զինքը որչա՞փ
շատ կը սիրէ, եւ թէ միշտ իր հետն է Ան. նոյն-
խակ գիշերը՝ երբ ինք, Նիու Յու, կը քնանայ:
Ան օրէն իվեր պզտիկ Զինուհին ամէն երեկոյ
կը խնդրէ Տէր Յիսուսէն զինք կանուխ արթըն-
ցընել՝ որպէսզի կրնայ Անոր հետ վայրկեան մը
առանձին խօսիլ, բոլոր միւսներուն արթննալէն
առաջ: Այս առաւօտ կ'ուզէ Անոր ըսել թէ սա-

ռեցնող հովը իր ձեռքին վրայ խորունկ ճեղքը-
ւածքներ կը բանայ:—«Տէր Յիսուս», կ'ըսէ ան,
«Ըրէ որ հովը շատ սաստիկ չըլլայ, երբ ես
պէտք է դուրս երթամ ճաշի համար բանջարե-
ղէններ գնելու. եւ ըրէ որ խանութպանը լաւ
տրամադրութեան մէջ ըլլայ, եւ չբարկանայ երբ
ես անմիջապէս չկրնամ գրպանէս հանել դրամ-
ները վճարելու համար. եւ... հոս իր պզտիկ
դիմագիծը աւելի լուրջ կը դառնայ. «Ոհ, եթէ
կը հաճիս, ըրէ որ մաման ալ կրնայ սորվիլ քեզ
սիրելը... այն ատեն այլեւս ան պիտի չգան-
գատի շատ դժուար եւ սուղ կեանքին դէմ: Օգ-
նէ նաեւ «պապա»ին որ ժողովներուն գայ,
որպէսզի այլեւս իրեկունը այնչափ երկար ատեն
այն միւս մարդոց հետ չմնայ, որոնք կ'երգեն
եւ պարապ բաներ կը խօսին. Տէր Յիսուս, օգնէ
որ ան բարի ըլլայ եւ քեզ սիրէ:»

Մէկը կը շարժի, վայրկեանէ մը ամէնը պի-
տի արթննան: Լոյսը լո՞ին սենեակը լեցուցած է,
երեւան բերելով աղտոտ պատերն ու ցեխոտ
գետինը: Նիու Յու կը հառաչէ, վայրկեանէ մը
աղմուկը պիտի վերսկսի. հազիւ ժամանակ ունի
ցած ձայնով ըսելու.—«Տէրը իմ հովիւն է, ես
բանի մը կարօտութիւն պիտի չունենամ...»
Մայրը կէս քուն կէս արթուն կը պոռայ. «Ի՞նչ
կ'ըսես ի՞նչ».—«Յիսուսի հետ կը խօսիմ» կը պա-
տասխանէ պզտիկը ահաբեկած բայց ուրախ. եւ
մայրը յանկարծ խոհուն կը դառնայ, մինչ ինքն
ալ կը պատրաստուի նոր օրը սկսելու:

Ճաշը լմնցած է: Երախաները դուրսը կը
խաղան: Մայրիկը հօրը հողաթափները կը կար-
կըտէ: Նիու Յու անոր քով կը նստի իր ասեղ-
նադործով, այնչափ շատ կը սիրէ ան ճերմակ
կտաւին վրայի գծուած պզտիկ կէտերը շինել:
Փրկութեան Բանակին մէջ է որ կը սորվի դա-
նոնք ընել, կ'ուզէ շուտ սորվիլ՝ որպէսզի քիչ
մը դրամ շահի:

—Ի՞նչ կ'ըսէիր այս առտու բանի մը կարօ-
տութիւն չունենալու համար», կը հարցնէ յան-
կարծ մայրը:—«Ես կ'ըսէի միայն որ երբ մենք
Յիսուսը կը սիրենք, վստահ ենք թէ ամէն ինչ
բանի որ կը կարօտինք՝ պիտի ունենանք» կ'ըսէ
աղջնակը ամաչկոտութեամբ: Յետոյ մայրը կը
շարունակէ. «Դուն շատ աւելի խելօք ես այն
օրէն իվեր՝ որ կ'ըսես թէ Յիսուսը կը սիրես.
եթէ միայն եղբայրներդ ու քոյրերդ նոյն բանը
ընէին... Այս ձեռագործն ալ դէշ չէ. եւ դուն սի-
րուն բաներ կ'երգես: Կրնա՞ս կարգալ: «Ո՛չ»
կ'ըսէ Նիու Յու, «գրքեր չունիմ, բայց այնքա՞ն
պիտի փափաքէի Յիսուսի պատմութիւնը կար-
գալ:» Հոս, ան կը հառաչէ. յետոյ յանկարծ ճա-
ռագայթող ժպիտով մը կ'աւելցնէ.—«Մամա, չե՞ս
ուզեր այս երեկոյ հետս ժողովին գալ, դուն ալ
կրնաս սորվիլ Յիսուսը սիրել:»

Մայրը Հպատասխաններ, բայց կը ժպտի.
«Վ գիտէ . . . :

Իրիկուն է : Նիու Յու մօրը ձեռքէն բռնած
զայն կ'առաջնորդէ : Նեղ եւ խորտուրտ փո-
ղոցներուն երկայնքէն, անոնք կ'երթան տաքուկ
եւ լուսաւոր սրահը՝ ուր փրկութեան բարի
լուրը կ'աւետուի : Իր մօրը քով նստած՝ պզ-
տիկ աղջկան զէմքը ուրախութենէն կը փայլի :
Եւ երբ ժողովը վերջանալու վրայ է՝ նորէն պզ-
տիկ մանուկն է որ յաղթանդամ կ'ընէ «Չղջման
Սեղանը» կ'առաջնորդէ . . . : (Փրկութեան բա-
նակի սովորութեան մը համաձայն) :

Երբ անոնք ետ իրենց աղքատիկ բնակա-
րանին ճամբան ձեռք կ'առնեն, աստղերը կը
փայլին՝ եւ երկինքէն իրենց կը ժպտին : Հովը
դադրեցուցած իր տխուր կոծը՝ հիմա ցնծութեան
կրկ մը կը յօրինէ՝ ցաթկտելով խնդրեալ մը
բարձր պարիսպներուն վերեւները եւ ծառերու
ճիւղերուն մէջերը :

«Յիսուսը կը սիրեմ. ինչ լաւ բան է զայն
սիրելը» կը փափայ մայրը կամացուկ. «Որչափ
պիտի ուզէի որ հայրիկդ ալ սորվէր զԱյն սի-
րել, այն ատեն տանը մէջ ամէն ինչ լաւ պիտի
ըլլար :»

— Կ'աղօթենք իրեն համար մամա. — եւ իր
ձայնը յաղթական ուրախութեամբ մը կը թրթը-
ռայ, երբ կ'աւելցնէ. — «Ես միշտ էի քեզի հա-
մար աղօթող, եւ Յիսուս պատասխանեց : Ան
զեռ աւելի՛ ալ շուտ պիտի պատասխանէ հիմա,
որ մենք երկու հոգի ենք իրմէն խնդրելու որ
Իր սէրը միւսներուն ալ տայ :

Եւ Տէր Յիսուս շատ երկար չ'սպասեց՝ պզ-
տիկ «Նիու Յու»ին աղօթքին պատասխանելու :
Թարգմ. «Փէօն Սօլտա»էն Վ. Ս.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՊԶՏԻԿ ԶՕՏԸ»

ԶԱՒԱՆԱ-ՔՈՒՊԱՅԻ ՄԷՋ

Քուպա, Հաւանա գաղթող հայերէն առաջիններէն
ըլլալով, երեք տարիէն աւելի կ'ընէ որ հոս եմ, եւ մէկ
տարիէ ի վեր Տէրօջը Սր. գործին մէջ : Բոլորովին անու-
րանալի է ինչ համար Տէրօջը մասնաւոր գործունէու-
թիւնը եւ իր սիրոյն ու շնորհաց առատածեւծութիւնը որ
ընդունած ենք հոս այս տարուան մէջ, երբ անցեալ
երկու տարիները տվածսի կը մոռնէինք այս չոր ու
անուպատ երկրին մէջ : Ասկայն այն ատեն Տէր Յիսուս
կը ճանաչար իրենները, տեսաւ մեր առանց հովիւի եւ
ցիրուցան վիճակը, գծաց մեզի իր առատ ոգորմութեամբն
« սիրովը եւ «մեջպէս հաւ մը իր ձագերը թեւերուն
տակ կը ժողվէ,» անպէս ալ Տէրը զմեզ հաւաքեց եւ
կապլեց «Հաւանայի պգտիկ Հօտը» Քուպայի մէջ ալ :
Այս, մենք՝ այս «Հօտը», որոնցմէ մին եմ ես անարժա-
նարար, միաբերան եւ արտանց կ'արտասանենք եփեւ.
Ա. 3-Պ «Բոլոր անոնց հետ որ Տէրօջը անունը կը կանգնե-
մաւոր սրտով :»

Տեղւոյս մէջ շարաւր 4 ժողովներ կ'ըլլան. երեք-
շարքի եւ Հինգշարքի երեկոները, ընդհանրութեան հա-
մար, տեղւոյս ամերիկեան Baptist Missionի եկեղեցիին մէջ,
որ բոլորովին ձրի տրամադրուած է : Իսկ Չորեքշարքի
եւ Կիրակի երեկոները յատուկ Աստուծոյ զաւակներու
համար, եղբայրներէն մէկուն տան մէջ, եւ նպատակնիս
է մէկտեղ գալ Տէրօջը առջին եւ մասնաւոր գործունէ-
եւ օրհնութիւն խնդրել այս տեղի գործին համար : Ընդ-
հանուր ժողովներու յաճախողներուն թիւը առ առաւելն
30.35 է : Իսկ «Պգտիկ Հօտը» կը բաղկանայ 12 քոյրերէ
եւ 4 եղբայրներէ : Կ'օրհնենք մեր փրկիչը, որ թէեւ
բունիքը հոգեւոր առաջնորդ մը մինչեւ այսօր, (եւ պէտ-
քը կ'զգանք) տակաւն Տէր Յիսուս իր յայտնի ներկայու-
թեամբը կ'առաջնորդէ մեզի :

Սիրելի ընթերցողներէ պիտի խնդրէի որ այս մասին
անսպակաւ ընեն իրենց խնդրանքները մեր Աստուծոյն.
«Այս մասին վստահ ըլլալով որ Ան որ ձեր եւ մեր մէջ
բարի գործ մը սկսեց, պիտի կատարէ, մինչեւ Յիսուս
Քրիստոսի Օրը :» (Փիլ. Ա. 6) : Ահա Տէրօջը այս զարմա-
նալի գործերը պատմելէն յետոյ, ի սրտէ կը խոստովա-
նիմ թէ «Եթէ Տէրը մեզի հետ չըլլար, ոչինչ էինք, ու
բանի մըն ալ կարող չէինք. սակայն հիմա «Ամէն բանի
կարող ենք Անով՝ որ կը զօրացնէ մեզ :» (Փիլ. Դ. 13) :
«Օրհնէ Տէրը ով իմ անձս :»

ԶԵՆԱՍ ԵՂՈՑԵԱՆ

HABANA

Կարեւոր Զեկուցումներ, Սոյն թիւին 27 եւ 28 էջե-
րուն վրայ գտնուած գրութիւնը «Փորձաքար մը հաւատա-
ցեալներու համար» իրր թուոցիկ ալ հրատարակուած է,
նոր բաժանողները արձանագրելու նպատակաւ մեզմէ
ուզողներուն սահմանափակ թուով մը ձրի պիտի դրկենք,
իսկ իրենց քով պահելու համար ուզողներուն ալ կրնայ
դրկուիլ ուզուած չափով, հատը 50 անմիւս, Այս «Վոր-
ձաքարը» իւրաքանչիւր հաւատացեալի Աստուածաշունչին
մէջ գտնուելու է, իրր օժանդակ ծառայելու անձնաքըն-
նութեան պահուն,

Բանբերի Մահակալը, — Ուրախութեամբ կը ծա-
նուցանենք թէ «Բանբեր»ի անցեալ թիւին մէջ մեր ըրած
կոյր լայն արձագանգ գտած է ընթերցողներու մէջ, Առա-
ջինը եղաւ մարտ լարնակ բարեկեցիկ երիտասարդ մը որ
«Բանբեր»ի մահճակալին համար առաջին ամսականը վճա-
րելով ամսական տասը ֆրանքի խոստումով արձանագրե-
ուեցաւ, Այս եւ ասոր նման դէպքեր, որոնցմէ արդէն
մեր քով համեստ գումար մը գոյացած է, զմեզ կը քաջա-
լերեն հետեւեալ կարգադրութիւնը ընել Տպուած տոմսեր
«Բանբերի Մահճակալը» վերաւորութեամբ, իւրաքանչիւր
տոմսի տէր կը խոստանայ 10 անձնաւորութիւններ գտնել,
որոնք ամսական կամաւոր նուէր մը պիտի տան «Բան-
բեր»ի մահճակալին համար, Շտապեցէք ձեզի համար
տոմս մը ապահովելով ձեր բարեկամներուն մօտենալ,
Այս գործին մէջ օրհնութիւններ պահուած են, ջանացէք
այն օրհնութիւնները ձեզի իւրացնել, վերջիշեալ երի-
տասարդը կը պատմէր թէ Տէրը իր տուած նուէրին հա-
մար զինքը արդէն օրհնած էր, ոչ միայն հոգեւորապէս,
այլ նաեւ նիւթապէս :

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար, Երեցեան, 40, Բիւ. տէ Տօմինիքէն, Մարտիլ